

**Քիմկաթընի մէջ տեղի ունեցաւ
Համազգայինի Գանատալի շրջանի
40-րդ Շրջանալին ժողովը**



Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Գանատայի շրջանի 40-րդ միօրեայ Շրջանային ժողովը տեղի ունեցաւ 17 Օգոստոս 2019-ին, Քինկաթը-նի Delta Hotels Kingston Waterfront ժողովարանին մէջ: Ժողովին ներկայ էին Հա-մազգայինի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ ընկեր Վիգէն Թիւֆէնքճե-հան եւ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկեր Վահէ Յա-կոբեան:

Օրակարգի աւարտին տեղի ունեցաւ 2019-2020 տարեշրջանի Գանատայի Շրջանային վարչութեան կազմի լրացուցիչ ընտրութիւնը: Ստորեւ կը ներկայացնենք վարչական կազմը եւ անոնց պաշտօնները.

- Ծովիկ Գահուէճեան, ատենապետ
 - Մեղդիկ Էթիմեմզեան, ատենադպիր
 - Սալբի Մարգարեան, գանձապահ
 - Մարալ Պէրպէրեան, խորհրդական
 - Սիւզի Նաճարեան, խորհրդական

Համագգայինի Գանատայի Ծրջանային վարչություն

Սմառնային արձակուրդներու պատճառով «Հորիզոն»-ի գրասենեակը փակ պիտի մնայ 26 Օգոստոսէն 6 Սեպտեմբեր: Յաջորդ թիւը լոյս պիտի տեսնէ Զորեհաբքի, 11 Սեպտեմբերին:

Արծրուն Յովհաննիսեան. «Հայաստանի Զինուած Ուժերը Ռազմավարական Նշանակութեան Դիրքերու Վրայ Վերահսկողութիւն Հաստատած Են»



Հայաստանի Զինուած ուժերը ռազմավարական նշանակություն ունեցող զորքեր առած են իրենց վերահսկողություն տակ: Այս մասին «Տիտուզ»-ին հետ զրոյցի մը ընթացքին ըսաւ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան բանբեր Արթուր Յովհաննիսեան՝ անդրադառնալով չրճանառուող լուրերուն, որ հայկական զինուժը Տաւուշի հիւսիսային հատուածին մէջ ունեցած է նոր բնագիծ՝ վերահսկողութեան տակ առնելով Վրաստանէն Հայաստան մտնող կազատարր եւ Հայաստան-Վրաստան մայրուղին:

«Ազդպէյճանը դիւրութեամբ պիտի չընկալէ, որ 25 տարի կազատարին նկատմամբ վերահսկողութիւն ունէր եւ հիմա կորսնցուցած է վերահսկողութիւնը: Ատիկա առանցքային եւ ռազմավարական նշանակութիւն ունի Հայաստանի համար», ըսաւ ան: Արծրուն Յովհաննիսեան նշեց, որ նման տեղեկութիւններ սովորաբար նախարարութիւնը գաղտնի կը պահէ՝ զինուորներուն անվտանգութիւնը ապահովելու համար:

Նշենք, որ պատմաբան, զինուորական փորձագետ Արթուր Եղիազարեան դիմա-տետրի իր էջին գրած էր, որ Հայաստանի Զինուած ուժերը լուրջ յաջողութիւններ ար-ձանագրած են Տաուշի մարզի Հիւսիսային հատուածին մէջ եւ կրցած են աւելի քան 140 հեկտար տարածք ազատագրել, որուն շնորհիւ հայկական ուժերու զբաղեցուցած բարձր զիրքերէն ուղիղ նշանառութեան տակ է Ազրայէճան-Վրաստան մարլուղին, Թիրախային գօտիին մէջ են նաեւ ազրայէճանական Իքինձի Շըխլը գիւղը եւ գիւղի ամբողջ ցանքատարածութիւններն ու արօտավայրերը:

ՆՈՐԻՉԴՆ 40

Նախագահութեամբ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի
Բարձր հովանաւորութեամբ Գանատայի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան
տիկին Անահիտ Յարութիւնեանի

«Հորիզոն» շաբաթաթերթի 40-ամեակին նուիրուած յոբելինական հանդիսութիւն-ճաշկերոյթ
Հովանաւորութեամբ՝ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէին

Մանրամասնությունները կարդալ էջ 3

[illegible]



MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



Հորիզոն 40

Նախագահությամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ
Բարգէն Արքեպիսկոպոս Չարեանի

Բարձր հովանաւորութեամբ Գանատայի մօտ
ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան տիկին Անահիտ Յարութիւնեանի

«Հորիզոն» շաբաթաթերթի 40-ամեակին նուիրուած յոբելինական հանդիսութիւն-ճաշկերոյթ

Հովանաւորութեամբ
ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէին

Կազմակերպութեամբ
«Հորիզոն»ի 40-ամեակի յանձնախումբին

Շաբաթ, 14 Սեպտեմբեր 2019-ին,
երեկոյեան ժամը 7:00-ին

Մոնթրէալի Հայ կեդրոնի «Ա. Ահարոնեան» սրահին մէջ
3401 Olivar Asselin, Montréal, Qc

Գեղարուեստական բաժինով ելոյթ կ'ունենան՝
Երգիչ Էլի Պերպէրեան
«Նոր Ծաղիկ» երգչախումբ
Ղեկավարութեամբ Էլօ Հարպոյեանի

Ընդունելութեան ընթրիքը կը սպասարկուի
կամաւոր մասնակցութեամբ հայ արհեստավարժ խոհարարներու՝
Chef Շանթ Մանկէլեանի
Chef Ռաֆֆի Ապրաքեանի
Chef Ռաֆֆի Անտոնեանի

Մուտքի նուէր՝ \$60.00
Տոմսերը ապահովելու համար հեռաձայնել
Մանան Ապրաքեանին (450) 689-5342, Մարօ Ֆրունճեանին (514) 748-7137,
Վանին Գապասարալեանին (514) 331-2239,
«Հորիզոն»ի գրասենեակ (514) 332-3757

CENTRE EMBASSY® PLAZA

CENTRE DE RÉCEPTION & CONGRÈS
RECEPTION & CONGRESS CENTER



450 781 0606
1003, CURÉ-LABELLE,
LAVAL, QC

PMG
PLAZA MANAGEMENT GROUP
BANQUETS • CONGRÈS • TRAITE

INFO@PLAZAPMG.COM
WWW.PLAZAPMG.COM
f @



CARROSSERIE PRISME
Peinture & Débosselage
Garage Agréé



Expert en
Infiniti et Acura



INFINITI




ACURA

Raffi Koushian
Propriétaire

1430 rue Michelin Laval, Qc. H7L 5C2
Tél: 450 967-3948 • Fax : 450 967-1642
carrosserieprisme@bellnet.ca

ARMENIAN HERITAGE CRUISE® 2020



7 night
Western Caribbean Cruise
JANUARY 12-19, 2020

Departing from Miami
• Labadee • Jamaica
• Cozumel



Prices start at:

INSIDE CABIN	\$1,069
CENTRAL PARK VIEW	\$1,169
OCEAN VIEW	\$1,279
CENTRAL PARK BALCONY	\$1,399
BOARDWALK BALCONY	\$1,399
OCEAN VIEW BALCONY	\$1,539
JUNIOR SUITES	\$2,329
GRAND SUITES	\$3,419

Rates are per person for double occupancy cabins:
Limited additional luxury suites available upon request. For pricing on triple and quad occupancy cabins, contact TravelGroup. Prices include Cruise, Port Charges and all AHC private events. Government tax of \$127.62 per person is additional. Rates and information subject to change at any time without notice.

TRAVELGROUP
INTERNATIONAL

Local **561-447-0750** Ext 108 or 102
Toll Free **1-866-447-0750**
AHC@travelgroupintl.com
125 SE Mizner Blvd, Suite 14, Boca Raton, FL 33432

THE FEATURED PERFORMERS

{ you must book with TravelGroup in order to attend private Armenian Events }



Medical Professionals are invited to register for our "Challenges in Global Health" program offering 15.0 ACCME, CPE and CDE credits.

«ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ԿՐԹԱԹՈՇԱԿ

PASDERMAJIAN FOUNDATION SCHOLARSHIP FONDATION PASDERMAJIAN BOURSE D'ÉTUDES

«Բաստրմաճեան Հիմնադրամ»-ի 2019-2020 ուսումնական տարեշրջանի
համալսարանական կրթաթոշակի դիմումագրերը
պիտի ընդունուին մինչեւ՝ 1 Նոյեմբեր 2019

Թեկնածուն պարտի ըլլալ՝

- Համալսարանական ուսանող՝ Պսակաւոր, Մագիստրոս կամ Դոկտորական աստիճանի:
- Յաջող իր ուսումնական արդիւնքներուն մէջ եւ գործունեայ տեղական եւ ի մասնաւորի հայկական կազմակերպութիւններէ եւ միութիւններէ ներս:
- Շրջանաւարտ՝ Մեծն Մոնթրէալի մէջ գործող հայկական երկրորդական վարժարանէ մը: Եթէ վարժարանը այդ ուսումնական տարեշրջանի ընթացքին երկրորդական 5րդ կարգ չունի, ուրեմն տուեալ վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները՝ շրջանաւարտ կը նկատուին:



Բարեհաճեցէ՛ք 2019-2020 տարեշրջանի դիմումագրերը պատուիրել կապուելով
հետեւեալ է-նամակի հասցէին՝ pasdermajian.scholarship@gmail.com

Նկատի պիտի առնուին միայն լրիւ ամբողջացած եւ է-նամակով ուղարկուած
դիմումագրերը, պահանջուած փաստաթուղթերով :

Արժեքատուր Վաւերագիրք. Հայոց Պետականութեան Վերածննդի 100 Էջերը

Ընթերցողի սեղանին է դրուել «Հայոց պետականութեան վերածննդի 100 էջերը» ալպոմ–վաւերագիրը՝ նուիր–ուած 1918 թ. մայիսեան հերոսամարտերի եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակման, այն է՝ հայոց պետականու–թեան վերականգնման 100–ամեայ տա–րեդարձին: Գրքի շնորհահանդէսը տեղի ունեցաւ երէկ, ԵՊՀ–ում:

Խորհրդանշական է ալպոմի էջերի թիւը՝ ճիշդ 100 էջ, որոնք ամփոփ ներ–կայացնում են Ա. Հանրապետութեան գոյութեան ընթացքում տեղի ունեցած պատմական իրադարձութիւնները՝ այն կարեւոր աշխատանքները, որոնք անհ–րաժեշտ էին պետականութեան վերածնն–դի համար: Գրքի հեղինակները՝ պատ–մաբան Սեդա Գալստեանը եւ Փոթոլ–րազդող Գաբրիէլ Փանոսեանը արխիւա–յին փաստաթղթերի եւ լուսանկարների համադրութեամբ այնպէս են ներկայաց–րել նիւթը, որ ընթերցողին միանգամայն ընկալելի է դառնում մեր հայրենիքի համար ճակատագրական այն օրերի բարդ ու հակասական բնոյթը, Ա. Հան–րապետութեան գոյութեան կարճ՝ երկու–սուկէս տարուայ ընթացքում կատար–ուած պետականահենք աշխատանքը:

Գիրքը սկսւում է դեռեւս Թիֆլի–սում գտնուող Հայոց ազգային խորհրդի 1918 թ. մայիսի 30–ի յայտարարութեան բնագրով, որով իրազեկւում է, որ՝ «Անդրկովկասի քաղաքական ամբող–ջութեան լուծումով եւ Վրաստանի ու Ազրպէյճանի անկախութեան հռչակու–մով ստեղծուած նոր դրութեան հանդէպ, Հայոց ազգային խորհուրդը իրեն յայ–տարարում է հայկական գաւառների գե–րագոյն եւ միակ իշխանութիւն»:

Իսկ հանրապետութեան հռչակումը տեղի էր ունեցել մայիսի 28–ին, Հայոց ազգային խորհրդի՝ Արամեանցի տանը տեղի ունե–ցած նիստում:

Պետականութեան վերակերտումը տեղի էր ունենում Հայաստանի եւ հայ ժողովրդի համար ծանրագոյն պայման–ներում. Ա. Աշխարհամարտի ծանր հետե–լանքներ, թուրքական ներխուժումից խիստ տուժած Արեւելեան Հայաստան, Յեղասպանութիւնից յետոյ Արեւմտեան Հայաստանի տարբեր բնակավայրերից Արեւելեան Հայաստան գաղթած բազ–մահազար քայքայուած բնտանիքներ, տասնեակ հազարաւոր որբ ու անտուն երեխաներ, որոնք սովի մատնուած, վա–րակիչ հիւանդութիւններից անպաշտ–պան դեգերում, մեռնում էին բաց երկն–քի տակ: Պետութիւնը չուներ համապա–տասխան միջոցներ՝ նրանց բաւարար օգնութիւն ցուցաբերելու համար: Ու–շագրաւ է ներքին գործերի նախարար Արամ Մանուկեանի կողք հանրութեանը, այն մարդկանց, որոնք համեմատաբար ապահովուած էին հացով: «... 50.000–ի հասնող որբերի մի ամբողջ սերունդ խնամելն ու դաստիարակելը այսօր մեզ

համար ինքնօգնութեան լաւագոյն աք–թերից մէկն է, որ պէտք է կատարենք մեր բովանդակ ուժերը լարելով եւ հոգու ամ–բողջ կորովը կեանքի կոչելով: Մեծ է կա–րիքը, միջոցները՝ սուղ, ժամանակը՝ կարճ: Կոչ եմ անում ամէնքին, որոնց կրծքի տակ դեռ չի մեռել մարդասիրու–թեան զգացմունքը, որ դեռ չեն կորցրել ցեղի բնագղը, որ գիտակցում են սեփա–կան շահը իրենց գաւակների: Օգնու–թեան եկէք ձեր կառավարութեան, փրկե–ցէք անկումից վաղուայ յոյսը մեր հայ–րենիքի, խնամոտ ձեռք կարկառեցէք մայթերի ու ճանապարհների վրայ մրմռացող անուժ որբերին, որոնց սովա–տանջ հայեացքը աղերսում է թէկուզ փշրանքը ձեր սեղանների: Մի՛ թողնէք, ձեր իսկ գաւակների ապագայի սիրուն, որ ձեր աչքերի առաջ այլասերման ենթարկ–ուի այդ մեծ բազմութիւնը անօգնական մանուկների: Փրկեցէք նրանց»:

Պետականութեան կայացման կարեւ–ւորագոյն երաշխիքներից էր հայոց բա–նակի ստեղծումը: 1917–ի վերջին եւ 1918–ի սկզբին կազմաւորուեց հայկական առանձին բանակային գորամիւտըրում՝ գորավար Թովմաս Նազարբէկեանի հրա–մանատարութեամբ: 1918 թ. սեպտեմբե–րին այն լուծարուեց, եւ կազմաւորուեց տիվիզիոն՝ զօր. Մովսէս Միլիկեանի հրա–մանատարութեամբ: Անձնակազմի ընդ–հանուր թիւը հասնում էր 16 հազարի: Ստեղծուեց Ձիւնուրական խորհուրդ, որը գլխաւորում էր Թ. Նազարբէկեանը: Նա ստանձնեց նաեւ բանակի սպարապետու–թիւնը: Հանրապետութեան ռազմական նախարարն էր զօր. Յովհ. Հախվերդեանը:

Երբ թուրքական զօրքը հեռացել էր Անդրկովկասից, 1919 թ. յունուարից մասնակի գորացրում կատարուեց: Փո–խարէնը յայտարարուեց 20–23 տարեկան զինապարտների զօրակոչ: Իր գոյութեան երկուսուկէս տարուայ ընթացքում Հա–յաստանի Ա. Հանրապետութիւնն ունեցել է չորս ռազմական նախարար. Յովհան–նէս Հախվերդեան, Քրիստափոր Արա–րատեան, Մինաս Տէր Մինասեան (Ռու–բէն), Դրաստամատ Կանայեան (Դրօ):

Գրքում առանձին շեշտադրու–թեամբ են ներկայացուած 1918 թ. մա–յիսեան հերոսամարտերը, որոնք ճակա–տագրական եւ վճռորոշ նշանակութիւն ունեցան Հայաստանի եւ հայ ժողովրդի համար: Ձլինէին այս յաղթանակները (Սարգարապատի, Բաշ Ապարանի, Ղա–րաքիլիսայի), յատկապէս՝ Սարգարապա–տի կեանքի ու մահուայ հերոսամարտը, չէին լինի ո՛ր Հայաստան, ո՛ր էլ պետա–կանութեան վերածնունդ, քանզի Անդր–կովկասի՝ Ռուսաստանի կազմից դուրս գալը, Անդկովկասեան Մէյմի թոյլ ու յեղեղուկ վիճակը, Կովկասեան ռազմա–ճակատի խիստ քայքայուած լինելը ան–չափ յարմար հնարաւորութիւն էին ստեղծել թուրքիայի համար՝ ջնջելով մի թիզ մնացած Հայաստանը, որի վրայ էր

հիմնականում մնացել ռազմաճակատը պահելու հոգսը, հասնել Կասպից ծով եւ իրականացնել իր վաղեմի երազանքը: Սարգարապատի հերոսամարտը մեր ժո–ղովրդի պատմութեան այն բացառիկ նշանակութիւն ունեցող ազգային մի–ասնութեան դրսեւորումներից է, երբ օր–հասական պահին հայն իր մէջ ուժ է գտնում վերջին ճիգով թշնամուն հասց–նել փրկարար հարուածը: Ինքնապահ–պանման բնագղը եւ խիղախ ու հայրե–նանուէր գաւակների անձնագոհ նուիր–րումը ապահովեցին հայ ժողովրդի՝ մա–զից կախուած գոյատեւման իրաւունքը:

Գրքում անդրադարձ է արւում նաեւ այն հիմնախնդիրներին, որ վերա–բերում են Լուռու, Ջաւախքի, Ջանդե–զուրի, Նախիջևեանի, Ղարաբաղի տա–րածքների պատկանելութեանը, դրանց ռազմական ու քաղաքական լուծման իրադարձութիւններին: Առանձնապէս շեշտւում է Ջանդեզուրի պաշտպանու–թիւնը, որի գլուխ կանգնած էր հայ ժո–ղովրդի ամենակարկառուն նուիրեալ գաւակներից մէկը՝ Գարեգին Նժդեհը:

Հարկւր տարուայ վաղեմութեան արխիւային փաստաթղթերը պատմում են պետականաշինութեան այն առաջ–նահերթ անելիքների մասին, որոնց ձեռք գարկեց Ա. Հանրապետութեան կառա–վարութիւնը: Հայոց ազգային խորհրդի 1918 թ. յուլիսի 24–ին (նոր տոմարով) հրապարակած յայտարարութիւնը տեղե–կացնում է, որ կազմուած է Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւն, որի կազմի մէջ են մտել հինգ գործիչ՝ Յովհաննէս Քաջազունի (նախարար նախագահ), Ալեքսանդր Խատիսեան (արտաքին գործերի նախարար), Արամ Մանուկեան (ներքին գործերի նախա–րար), Յովհաննէս Հախվերդեան (զի–նուորական գործերի նախարար), Խաչա–տուր Կարճիկեան (ֆինանսների նախա–րար): Կառավարութեան առաջնահերթ խնդիրներից էին երկրում տարրական իրաւակարգի ստեղծումը, փոստ–հե–ռագրային յարաբերութիւնների վերա–կանգնումը, պարէնաւորման տազնապի մեղմացումը, գաղթականների բնակե–ցումը եւ այլն: Արտաքին քաղաքակա–նութեան ոլորտում կարեւորում էին թուրքիայի հետ կնքուած հաշտութեան ամրապնդումը, թուրքական զօրքերի հեռացումը Հայաստանի սահմանից, գաղթականներին հայրենիք վերադարձ–նելը: Առաջնային էր նաեւ Ազրպէյճա–նի եւ Վրաստանի հետ սահմանների խնդրի լուծումը՝ իրբեւ հիմք ընդունե–լով ազգային սկզբունքները:

Երկրում մէկը միւսի յետեւից սկսե–ցին հիմնադրուել գործադիր եւ օրէնսդիր մարմինները: 1918 թ. օգոստոսի 1–ին աշ–խատանքը սկսեց Հայաստանի խորհրդա–րանը, որն ուներ քառասունհինգ պատ–գամաւոր: Աստիճանաբար ձեւաւորում էր հանրապետութեան օրէնսդրութիւնը:

Պետութեան արդիւնաւէտ կառավարման համար երկիրը բաժանուած էր տասը գա–ւառի: Գործում էին գաւառապետական վարչութիւնները, դատարանները, ռատի–ոկայան, գրադարաններ: Հայերէնը օրէն–քով յայտարարուել էր պետական լեզու: Երկրի տնտեսութեանն օգնելու եկան հա–րեւան երկրներից բարձրակարգ ճարտա–րագէտներ, մասնագէտներ: Սեփական բարձրորակ մարդուժը պատրաստելու նպատակով 1920 թ. յունուարի 31–ին բացուեց պետական համալսարանը՝ մէկ ճիւղով՝ պատմալեզուաբանական: Նոր ու–սումնական տարում բաժանմունքների թիւը հասաւ չորսի: Հայոց հողի վրայ սկսեցին գործել հայ գրականութիւնն ու թատրոնը: Կառավարութիւնը քայլեր է ձեռնարկում քաղաքաշինութեան գար–գացման ուղղութեամբ. 1919 թ. մայիսին ստեղծւում է գլխաւոր ճարտարապետի վարչութիւն՝ Ալեքսանդր Թամանեանի գլխաւորութեամբ:

Սկսուած անկախ պետականութեան կառուցումը, սակայն, լրջագոյն խոչըն–դոտի հանդիպեց ի դէմս թուրք–հայկա–կան պատերազմի: 1920 թ. սեպտեմբերի 28–ին թուրքական զօրքերը յարձակուե–ցին անկախ Հայաստանի վրայ:

– Ալեքսանդրապոլի դեկտեմբերի 2–ի հաշտութեան պայմանագրով պարտուած Հայաստանին պարտադրուեց ծանր պայմանագիր. Հայաստանը հրա–ժարւում էր Սեւրի դաշնագրից, հայ–թուրքական սահմանը հաստատուում էր Ախուրեան եւ Արաքս գետերով: Թուրք–իային անցաւ ոչ միայն Կարսի մարզը, այլեւ՝ Սուրմալուի գաւառը: Նախիջե–ւանի մարզը նոյնպէս անցաւ Թուրքիա–յի հովանու տակ եւ շուտով յանձնուեց Ազրպէյճանին:

Ծանրագոյն այս պարտութիւնը պիտի բորբոքէր յեղափոխական տրա–մադրութիւններ հանրապետութիւնում, որին նպաստում էր Խորհրդային Ռու–սաստանի միջամտութիւնը: 1920 թ. դեկտեմբերի 2–ին Հայաստանում հաս–տատուեց խորհրդային իշխանութիւն:

«Մայիսի 28–ը մեր պատմութեան ամենամեծ տօնն է: Հեռու չէ այն օրը, երբ մայիսի 28–ը տօնուկու է իբրեւ հա–մազգային անհերքելի ամենամեծ տօն, եւ ամէն հայ երկիւղածօրէն խոնարհուե–լու է այդ Տօնի առաջ»:

Ա. Հանրապե–տութեան առաջին վարչապետ Յովհան–նէս Քաջազունու այս խօսքը, որ հնչել է կառավարութեան ստեղծման կապակ–ցութեամբ, չի կորցրել իր նշանակու–թիւնը:

Տրամաբանական է, որ «Հայոց պետականութեան վերածննդի 100 էջե–րը» ալպոմ–վաւերագիրն աւարտւում է «Նեմեսիս» գործողութեան եւ այն իրա–կանացրած ազգանուէր հայորդիների մասին էջով:

ՊԵՏՐՈՍ ՍԱՐԴԻՒՍԱՆԵԱՆ



Ուրախութեամբ կը յայտարարենք որ Հայ Օգնութեան Միութեան Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի «Տոմիկ Օր»ը այս տարի ձօնուած է՝

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ

Ձեռնարկը տեղի պիտի ունենայ
Շաբաթ 23 Նոյեմբեր 2019ին
Հայ Կեդրոնէն ներս

Կը խնդրուի չխաչաձեւել

ՀՕՄԻ «Ռուբինա» Մասնաճիւղի
Տոմիկ Օրուայ Յանձնախումբ
Թորոնթօ

Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիոժամերը՝

ՎԱՐԳՈՒԸՐ- «Amenian Variety Show» Coop Radio 100.5 FM Երեքշաբթի երեկոները ժամը 6:00-7:00
ԹՈՐՈՆԹՕ- «Կիլիկիոյ Ձայն» CHTO AM 1690 Կիրակի երեկոները ժամը 8:00-11:00
ՄՈՆԹՐԵԱԼ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM Երկուշաբթի երեկոները՝ ժամը 9:30-12:00 Շաբաթ առաւօտները ժամը՝ 7:30-9:30 Կիրակի առաւօտները ժամը 7:00-8:00 «Վանայ Ձայն» 1450 AM Երկուշաբթի երեկոները ժամը 8:00-10:00
ՀԱՄԻԼԹՆ- «Հայ Կեդրոնի» ռատիոժամ CFMU 93.3 FM Կիրակի առաւօտեան 10:00-11:00 cfmu.mcmaster.ca



ՀՄԸՄ-ի Լաւալի «Ծաւարշ Քրիսեան» մասնաճիւղի բանակումը

ՀՄԸՄ-ի Լաւալի մասնաճիւղի տարեկան բանակումը տեղի ունեցաւ 2, 3, 4 Օգոստոս 2019-ի շաբաթավերջին, Լաւալի Հայ կեդրոնէն ներս, մասնակցութեամբ 110 քոյր-եղբայրներու: Բանակումը անուանուեցաւ «Շաւարշ Քրիսեան», իսկ խմբակները՝ Լիզպոնի նահատակ տղոց անուններով:

Բանակումը ընթացաւ ընկերային մթնոլորտի մէջ. սկստուական գիտելիքներու կողքին քոյր-եղբայրները ստացան հայեցի դաստիարակութիւն՝ վերանորոգելով իրենց միտքն ու հոգին:

Բանակումին երկրորդ օրը տեղի ունեցաւ միօրեայ պտոյտ մը դէպի Parc de domaine verte, ուր տեղի ունեցան դաշտային խաղեր, իսկ երրորդ օրը արշաւեցին դէպի կեդրոնին մօտակայ Parc-ը:

Եռօրեայ բանակումին ընթացքին սկսուեցան տրուեցան դասախօսութիւններ. ՀՄԸՄ-ի Լաւալի մասնաճիւղի վարչութեան անդամ եղբ. Լեւոն Իսկէնտէրեան դասախօսեց «Ո՞վ է տիպար սկսուտը» նիւթը, իսկ Գանատայի Շրջանային Սկսուտ խորհուրդի ատենադպիր եղբ. Ալեքսան Գուլումճեան դասախօսեց «Սկսուտական կապեր»ուն մասին: Բանակումին ամենէն հաճելի պահերն էին գիշերային խրախճանքները, խարոյկին շուրջ, ազգային երգերով եւ սկսուտական կանչերով:

Փոքրերը պատասխանատուներուն օգնութեամբ եւ մեծ խանդավառութեամբ պատրաստեցին խարուկահանդէսը, որ տեղի ունեցաւ Կիրակի, ժամը 7-ին, եւ որուն ներկայ էին Լաւալի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Յակոբ Քէն. Կեատայեան, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մհեր Գարա-դաշեան, ՀՅԴ «Սարգիս Զէյթեան» կոմիտէի ներկայացուցիչներ, ՀՄԸՄ-ի Շրջանային վարչութեան անդամներ, ՀՄԸՄ Գանատայի Սկսուտ խորհուրդի անդամներ, ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքի անդամներ եւ համակիրներ, ինչպէս նաեւ ազգային մարմիններու եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ:

Խարուկահանդէսին բացման արարողութիւնը կատարուեցաւ ՀՄԸՄ-ի քայլեր-գի երգեցողութեամբ, զրօշակի արարողութեամբ եւ տողանցքով, որմէ ետք ՀՄԸՄ-ի



Լաւալի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Ռաֆֆի Հատիտեան իր բացման խօսքով շնորհակտեց «Շաւարշ Քրիսեան» բանակումի յաջողութիւնը եւ բարի դա-լուստ մաղթեց ներկաներուն, ապա փոխանցեց ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչութեան ողջոյնն ու քաջալերանքը: Անկէ ետք քոյրեր եւ եղբայրներ ներկայացուցին բացման պատկերը՝ եռագոյն դրօշի ծածանումով:

Յաջորդաբար խօսք առին Գանատայի Շրջանային Սկսուտ խորհուրդի ատե-նապետ եղբ. Արալի Ղազարեան եւ մասնաճիւղիս Սկսուտ խորհուրդի ատենապետ եղբ. Յովիկ Համալեան:

Բանակող կրտսեր քոյրեր եւ եղբայրները հանդէս եկան սկսուտական մար-դանքներով՝ «Ռիթմիկ»ով եւ «բուրգ»ով, որոնք պատրաստուած էին երէց խումբերու եղբայրներուն հսկողութեամբ: Տեղի ունեցաւ նաեւ աստիճանատուչութիւն, որուն ընթացքին փոխ խմբապետի պաշտօն տրուեցաւ եղբ. Ռաֆֆի Զալլօղլեանին:

Տեղի ունեցաւ խումբերու հայկական պարերու եւ ազգային երգերու ելոյթները, որոնք արժանացան ներկաներուն քաջալերական ծափողջոյններուն: Այս առթիւ նաեւ եղան սրտաբուխ նուիրատուութիւններ:

ՀՄԸՄ-ի Լաւալի մասնաճիւղի Գալլ-արծուիկ միաւորի պատասխանատու Քոյր Նրանի Նաճարեան

Ուիմծրրի Ս. Ստեփանոս համայնքի կազմակերպութեամբ դաշտագնացութիւն

Կիրակի, 11 Օգոստոս 2019-ին, Ուիմծրրի Ս. Ստեփանոս Համայնքը կազմակեր-պած էր դաշտագնացութիւն մը, որ համախմբած էր չրջանի հայրենակիցները՝ հայ-կական ջերմ մթնոլորտի մէջ եւ պայծառ արեւուն տակ:

Խանդավառութիւնը մեծ էր: Երեխաները կը վազվուէին բաց դաշտին մէջ, երիտասարդներն ու մեծերը կը զրուցէին իրենց առօրեայէն, եւ ամէն մարդ կը վայե-լէր անգամ մը եւս գիրար տեսած ըլլալու եւ իրարու հետ ըլլալու քաղցր պահը:

Օրը առաւել եւս իմաստաւորուեցաւ, երբ յետմիջօրէին, համադրած սեղանի բա-րիքներէն օգտուելէ ետք, տեղի ունեցաւ խաղողօրհնէքի արարողութիւնը, Ս. Աստ-ուածածնայ շաբթուան սեմին գտնուելու առիթով: Աւանդական խաղողօրհնէքը կա-տարեցին Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդական Փոխանորդ Գերապատիւ Տ. Գե-ղարդ Մ. Վրդ. Քիւսպէկեան եւ համայնքիս այցելու ինչպէս նաեւ Տիթրոյիթի Ս. Սարգիս եկեղեցւոյ հովիւ Արժանապատիւ Տ. Տրանդ Քէն. Գէորգեան, իրենց հետ ու-նենալով դպիրներ եւ սարկաւազներ:

Հայր Գեղարդ համայնքին փոխանցեց Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանի ողջոյններն ու հայրական օրհնանքը, գնահա-տելով Ս. Ստեփանոս համայնքի հոգաբարձական կազմը, չրջանի կոմիտէութիւնն ու ՀՕՄ-ը, որոնք ձեռք-ձեռքի, տակաւ առ տակաւ աւելի կազմակերպ եւ աշխոյժ կը դարձնեն չրջանի հայութեան կեանքը, եւ նման օրհնաբեր առիթներ կը ստեղծեն ի մի խմբելու համայնքի գաւակները: Հայր Սուրբը անդրադարձաւ նաեւ Ս. Աստուածած-նայ տօնին եւ խաղողօրհնէքի իմաստին ու խորհուրդին եւ մաղթեց, որ Ուիմծրրի Հայ համայնքը միշտ հաստատ մնայ Քրիստոս «Որթատուէկին» վրայ եւ ըլլայ առատա-պէս պտղաբեր:



 Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com 	 ALBERT ARKILANIAN (Courtier immobilier résidentiel) Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent  Satisfaction garantie ou je revends votre propriété gratuitement!	  VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca 7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com  
 École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	 Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel. (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7 Services available in Armenian, Arabic, English and French	BRING YOUR OWN WINE  NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON  MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	  ՀԱՅԿ ԽԱՐԹՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000	 NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Հրաժեշտ՝ Կրկին Հանդիպելու Ակնկալիքով

ՀՅԴ երիտասարդական միութիւններ են գործում Արցախում, Հայաստանում եւ արտասահմանեան մի շարք երկրներում, մասնաւորապէս՝ Լիբանանում, Ֆրանսայում, Միացեալ Նահանգներում, Արժանթի–նում, Գանատայում, Կիպրոսում, Յունաստանում եւ այլուր։ Այդ բոլոր երկրների երիտասարդական միու–թիւնների փոխհամագործակցութեամբ կազմակերպոււմ են բազմապիսի բարեգործական, ազգանպաստ միջոցա–ռումներ, որոնք միայն մի նպատակ են հետապնդում. երիտասարդ սերունդներին աւելի մօտեցնել Հայոց պատմութեանը, ծանօթացնել Դաշնակցութեան հետ եւ այնպէս անել, որ վաղուայ երիտասարդութիւնն աւելի ազգանուէր ու հայրենասէր լինի։

Ամերիկայի Արեւմտեան շրջանի եւ Արցախի ՀՅԴ երիտասարդական միութիւնների համատեղ ջանքերով Ասկերանի Էդմոն Բարսեղեանի անուան միջնակարգ դպրոցում յուլիսի 22–ից մեկնարկեց պատանեկան ճամբար, որտեղ յաճախում էին շրջկենտրոնից եւ յա–րակից բնակավայրերից 9–ից 16 տարեկան 150 երեխայ։ Նրանց հետ աշխատում էին Միացեալ Նահանգների Արեւմտեան շրջանից ժամանած 18 երիտասարդներ՝ պատասխանատու ընկեր Արամի գլխաւորութեամբ։ Խումբն առաջնորդւում էր յատուկ ծրագրով, որում ընդգրկուած էին երգի ուսուցման, անգլերէնի, ինչպէս նաեւ հայոց պատմութեան դասընթացներ։ Անցկացւում էին նաեւ մտային խաղեր, մարզանք, մարզական մրցոյթներ։ Ինչպէս նշում են ճամբարի կազմակերպիչ–ները, ճամբարի նպատակը ոչ միայն երեխաների ամա–ռային հանգիստը բազմաբովանդակ կազմակերպելն է, այլեւ Արցախ – սփիւռք կապերի, ազգային աւանդոյթ–ների ամրապնդմանն է ուղղուած, նրանց կազմակերպ–ուածութիւն, ընկերասիրութիւն եւ կարգապահութիւն սովորեցնելը։ Այդպիսով, իւրաքանչիւրը իւրովի մաս–նակցում է Արցախ աշխարհի շէնացմանն ու բարգա–

ւաճմանը, քանզի քաջ գիտակցում է, որ դա է հզօր հայրենիք կերտելու ճշմարիտ ճանապարհը։

Ճամբարականները մեծ սիրով են ճամբար յաճա–խում եւ այդ օրուան սպասում են սրտատրոփ։ Ուրա–խալի է, որ ուսումնական տարին աւարտելուց յետոյ դպրոցականներից յաճախակի էինք լսում՝ լինելո՞ւ է այս ամառ ճամբար, թէ՞ ոչ, Լիբանանի՞ց են գալու, թէ՞ Միացեալ Նահանգների Արեւմտեան շրջանից։ Ի՞նչ խօսք, սփիւռքահայ երիտասարդները սպասուած եւ սիրուած էին պատանի ասկերանցիների համար։

Ակնյայտ էր, որ սփիւռքից ժամանած մեր երիտա–սարդներին յաջողուել է երեխաների ամառույին հան–գիստը բովանդակալից, հետաքրքրաշարժ կազմակեր–պել, նրանց մէջ սերմանել հայրենասիրական վեհ զգաց–մունքներ, ամրապնդել հայի պահանջատիրական ոգին։ Երեխաները գիտակցում էին, որ հայ ազգի ձայնը պէտք է լսելի դարձնեն ողջ աշխարհին՝ պահանջելով Հայոց ցեղասպանութեան եւ Արցախի անկախութեան ճանաչումը։

Շփուելով սփիւռքահայ երիտասարդների հետ՝ աւելի համոզուեցինք նրանց ընդգծուած հայրենասի–րութեան մէջ։ Նրանք այնքա՜ն հպարտ էին, որ հայ են եւ այսօր գտնոււմ են Արցախի սուրբ հողի վրայ, որտեղ այնքա՜ն անելիքներ ունեն անելու։ Նրանց քաղցրա–հունչ արեւմտահայերէնը աւելի մտերմիկ էր դարձնում մեզ։ Երիտասարդները, որոնք 18–22 տարեկան էին, մտածում էին հայերէն, խօսում էին հայերէն։

Օգոստոսի 2–ին Ասկերանի Էդմոն Բարսեղեանի անուան միջնակարգ դպրոցի բակում ճամբարի փակ–ման հանդիսաւոր արարողութիւն էր։ Միջոցառմանը ներկայ էին Ասկերանի շրջվարչակազմի ղեկավար Յա–կոբ Ղահրամանեանը, ՀՅԴ Արցախի ԿԿ–ի եւ Ասկերանի կոմիտէի ներկայացուցիչներ, ասկերանցիներ։Բացման խօսքով հանդէս եկաւ Ամերիկայի Արեւմտեան շրջանից

ժամանած երիտասարդական խմբի ղեկավար Արամ Մանուկեանը.

– Այս երկու շաբաթների ընթացքում մենք մեծ սիրով աշխատեցինք արցախցի փոքրիկների հետ, մօտի–կից շփուեցինք եւ ծանօթացանք նրանց նախասիրու–թիւններին։ Ինչքան կարողացանք, նրանց մէջ հայրե–նասիրութիւնն էլ աւելի ամրապնդեցինք եւ այսօր ձեր դատին ենք ներկայացնելու երգերի մրցոյթը։

Այս ճամբարը մեր միասնականութեան արտացո–լումն է, որի պտուղները հետագայում ենք տեսնելու։ Արդիւնքում՝ ունենալու ենք արժանի սերունդ, ով տէր է լինելու մեր հայրենիքին։

Կեցցէ՛ք դուք, սիրելի՛ երիտասարդներ, շնորհակա–լութիւն՝ այս հայրենանուէր գործի համար։

ՀՅԴ Արցախի ԿԿ–ի անդամ Սերգէյ Շահվերդեանի

ելոյթը հպարտութեամբ էք շաղախուած։

«Այս ամառ Արցախի չորս շրջաններում ՀՅԴ Ամերիկայի Արեւմտեան շրջանի, Լիբանանի եւ Արցախի ՀՅԴ երիտասարդական միութիւնների միջոցներով կազ–մակերպուել են ճամբարներ։ Բարի նախանձով եմ նա–յում այս ծրագրերին եւ ափսոսում, որ մենք այսպիսի հնարաւորութիւններ չունէինք։

ՀՅԴ ԿԿ–ի անունից շնորհակալութիւն եմ յայտ–նում մեր երիտասարդներին այսպիսի նախաձեռնու–թիւնների համար», ասաց Ս. Շահվերդեանը։

Ճամբարականները, որոնք բաժանուել էին երեք խմբերի՝ կարմիր, կապոյտ եւ նարնջագոյն, հանդէս եկան երգի մրցոյթով։ Հայրենասիրական երգերի շարա–նը մեծ ոգեւորութիւն առաջացրեց ներկաների մօտ։ Վերջում ճամբարի բոլոր մասնակիցները միասին նկար–ուեցին եւ իրար հրաժեշտ տուեցին՝ յաջորդ տարի կրկին հանդիպելու մեծ յոյսերով։

ԿԱՌԻՆԷ ԲԱՒԾԻՆԱՆ

Նորոգել Ազգին Միաւորման Գաղափարական Խարիսիւր

Հայոց վերապրումի եւ զարգացման պայքարի ճամբուն վրայ կարեւոր հանգրուան մըն է Սեւրի դաշ–նագիրը, որուն հարիւրամեակը կը լրանայ եկող տարի։

Անոր ապրող կարեւորութիւնը այն իրողութեան մէջ է, որ Մեծ Հայքի մէջ Բազրատունեաց թագաւորու–թեան կործանումէն՝ 1045էն, գրեթէ տասը դար ետք, միջազգային համայնքը ընդունեց հայ ազգը իբրեւ քաղաքական գործօն եւ հայոց պետականութեան ներ–կայացուցիչը հրաւիրեց Համաշխարհային Ա. պատե–րազմի հաշուեյարդար տեսնող այդ հաւաքին։

Դաշնագիրները, վերջին հաշիւով, իրաւական թուղթեր են, որոնք ուժ կը ստանան ստորագրիներու ենթակայական թէ առարկայական հօրութենէն։ Սեւրի դաշնագիրը օրին ստացած իր կարեւորութենէն անդին, որուն ետին կը գտնուէր Հայաստանի Հանրապետու–թեան մէջ խտացած հայոց ազգային կենսունակու–թիւնը, Համաշխարհային Ա. պատերազմին մեր հսկայ զոհողութիւնները եւ Յնդասպանութիւնը նկատի կ’առ–նէր այնքանով, որքանով Հանրապետութիւնը կը ներ–կայացնէր իբրեւ նոր ձեւաւորուող աշխարհին մէջ ազ–դակ, որ կրնայ ա՛լ աւելի հզօրանալ։

Քաղաքականութիւնը նկատի չ’առնել թուլու–թիւնները, պարտուածները՝ ինչպէս պատմութիւնը կը թելադրեն յաղթականները։ Սեւրի դաշնագրիի ճակա–տագիրն ալ տարբեր պիտի չըլլար, երբ շուտով Հանրա–պետութիւնը թուրքեւայդշեիկեան աքցանին մէջ առն–ուեցաւ ու ճգմուեցաւ։

Այնուամենայնիւ, Սեւրի մէջ վաստկուած ճանա–չումը պահպանուեցաւ, Հայաստանը մնաց հանրապետու–թիւն, թէկուզ՝ Խորհրդային պիտակով։ Միաժամանակ՝ որեւրիմ դաշնակից գոյգը՝ թուրքն ու ռուսը, ձեռք ձեռքի, կարելի եղածին չափ տկարացուցին հայկական գործօնի ապագայ հօրացման նախադրեալները, առաջին հերթին մասնատելով Հանրապետութեան միջազգայնօրէն ճանչց–ուած հողային ամբողջականութիւնը, ապա՝ շրջափա–կումներու պատանդ դարձնելով երկիրն ու ժողովուրդը։ Այդ օրերուն օրակարգ էր Արցախի հետ նաեւ Զանգեզու–րը Ատրպէյճանին կցելու խնդիրը, զոր ձախողութեան մատնեց Լեռնահայաստանի հերոսական դիմադրութիւնը։

Վերարժեւորելու համար Սեւրի դաշնագիրը եւ հետեւած Ուիլսոնեան իրաւարարութիւնը, Հայաստանի հողային պայմանական ամբողջականութիւնը վերա–կանգնելու հարց գործնապէս չի հետապնդուիր։ Կը գրենք ու կը խօսինք այդ մասին, առանց համարժէք քայլերու ձեռնարկելու։ Մեր հնարաւորութիւնները հայրենի հողին վրայ ահռելիօրէն սահմանափակուած են, ինչպէս նախատեսուած էր 1920ական թուականնե–րուն սկիզբը։

Հայոց հակառակորդներուն համար ալ հարցը

փակուած չէ, պարզապէս պատեհ առիթ մը եւ հաւասա–րակչութեան խախտելուն պարագային հետամուտ պի–տի ըլլան աշխարհաքաղաքական սեփական շահերուն, որ հայոց հայրենիքին վրայով կ’անցնի։

Կասկածէ վեր է, որ Արցախ աշխարհի ազատագրու–մը ատրպէյճանական լուծէն ամրապնդումն էր Սեւրի դաշնագիրով ճանչցուած հայկական գործօնի կենսու–նակութեան։ Քաղաքական աշխարհի վերաբերմունքը՝ թեր կամ դէմ, այդ կենսունակութեան հետ հաշիւի կը նստի։ Որքան արդիւնաւոր դրսեւորուի այդ կենսունա–կութիւնը, ո՛րքան ամուր եւ կուռ ըլլայ հայոց ազգային կազմակերպուածութիւնը, հաստատուն՝ գաղափարական հիմքը, միաբանութիւնը եւ ըմբռնողութիւնը ազգային ընդհանուր ուղեգիծին հանդէպ, այնքան կ’աճի յար–գանքը հայոց եւ անոր իղձերուն հանդէպ։

Վերջապէս, պատմութեան թատերաբեմին վրայ մնալու համար անվերջնալի, նաեւ՝ ներկայ հանդա–մանքներուն մէջ, անհաւասար պայքար մղելու հար–կադրուած է Հայաստանը եւ հայր։ Այս պայքարին մէջ չթուլնալու եւ տեղի չտալու համար, նիւթական հզօ–րութիւններու կուտակումը թերեւս չբաւեն ազգի ներ–քին ամրութիւնը եւ աշխատանքի արդիւնաւէտու–թիւնը երկար ժամանակի վրայ պահպանելու համար։ Ահա, չուրջ երեք տասնամեակէ ի վեր, Արցախի ազա–տագրական պայքարի յաղթանակը բաւական չեղաւ զայն քաղաքական սակարկութիւններէ դուրս բերելու, վերջնականացնելու եւ զարգացնելու կամք դրսեւորելու համար։ Երկիրը եւ ժողովուրդը պատանդ մնացին ոչ–պատերազմ, ոչ–խաղաղութիւն մաշող առօրեային։

Հաւանական է, որ օր մը Ուիլսոնեան Հայաստա–նի սահմանները վերականգնելէ ետք ալ նոյնը պատա–հի։ Փայլատակումները շուտ կը հանգին, կը սպառին։ 1918ի փայլատակումները Սարդարապատէն մինչեւ Արարա ու Պաքու, 1920ին հանգած էին։

Ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանը հզօր դադափար է, զոր իրագործելէ ետք պայքարը եւ կռիւը պիտի չաւարտին, այլ պիտի շարունակուին նոր դիրքե–րէ, թերեւս նոր ոսոխներու դէմ։ Այսօր, երբ կը խօսինք եւ կը գրենք մեծամասնութեան համար երազային թուացող բաղձալի նպատակին մասին, երբ յարաբերա–կան խաղաղութիւն է նաեւ մեր պետութեան համար, ժամանակն է ազգային համաձայնութիւն մշակելու ոչ թէ Միացեալ Հայաստան, Միացեալ Հայութեամբ նպա–տակին շուրջ, այլ զայն ամրապնդող, կենսաւորող եւ տեւական դարձնող ազգային առաքելութեան շուրջ։

Այո՛, այսօր եւ ոչ թէ վաղը ըսել՝ ինչո՛ւ կենսա–կան է հայոց քաղաքակրթական բնավայրի ամբողջա–ցումը եւ բնակեցումը բնիկ ժողովուրդով։ Եթէ ազգա–յին միասնութիւն պէտք է երկար եւ դաժան պայքար

մղելու, ազգովին նորանոր զոհողութիւններ յանձն առ–նելու համար, եթէ կ’ուզենք խուսափիլ հերթական փայ–լատակումէն եւ տեւական՝ ազգու ներկայութիւն ըլլալ համաշխարհային թատերաբեմին վրայ, հարկ է դրսերու մաշումին տոկալ՝ հայ անհատը, սերունդներ խանդա–վառելով ոչ միայն պատմութեամբ եւ հոն տեղ գտած սխրանքներով, այլ ներշնչելով կենսունակ, ապագայա–հայեաց գաղափարով, տեսլականով։

Միացեալ Հայաստան, միացեալ հայութեամբ բա–նաձեւը արդէն հարիւր տարիէ ի վեր գոյութեան իրա–ւունք նուաճած է։ Սակայն, ըստ երեւոյթին, նոր խթան եւ իտէալ պէտք են՝ անոնց իրականացման հետամուտ ըլլալու համար։

Հայոց պատմութիւնը շուրջ երկու հազար տարի հիւսուած է ազատութեան եւ ինքնիշխանութեան համար մղուած պայքարներով, որոնք պարբերաբար սաստկացած են, ապա հանգած, առանց երկար ժամանակի վրայ գա–նոնք արդիւնաւորել եւ ամրապնդել կարենալու, պտը–տելով ազնուականութեան, նախարարական տուներու իշխանական յաւակնութիւններուն շուրջ։

19րդ դարու ազգային գարթօնքը համաժողովր–դական խարիսխի վրայ ջանաց վերականգնել ազգն ու հայրենիքը։ Եւ այս շարժումը բոցավարողը եղաւ ազգի պատմութեան վերիվայրումներուն տոկացած հարստու–թիւնը՝ գիրը, գրականութիւնը, գեղարուեստը, մշակոյ–թը։ Յաջորդ մակարդակը, որ աննուաճ մնաց քաղա–քակրթութեան բիւրեղացումն էր։ Մենք շարունակե–ցինք տարտղնուած մնալ արեւելքի, արեւմուտքի, հիւ–սիսի եւ հարաւի միջեւ։ Ահա ա՛յս է որ պարտինք յաղ–թահարել, յամառօրէն եւ աննահանջ, մէկ անգամ ընդ–միշտ վերջ տալու համար արեւելումներու միջեւ տա–տանումներուն։

Սեւրի մէջ արձանագրուած նուաճումը նախ պի–տի գիտնանք ամրապնդել քաղաքակրթական ճակատի վրայ, որպէսզի յստակացուի հետագան՝ նպատակ, միջոց թէ առաքելութիւն։ Մենք կցորդ չենք ուրիշներու, պէտք չէ՛ ըլլանք, ուրիշներ՝ որոնք անկարող են ցոյց տալու ներդաշնակ աշխարհի եւ մարդկութեան ուղին։

Սեւրը ազգին համար յաղթանակ մըն էր ու նոր մակարդակի պետականութեան նուաճում, որ անմիջապէս դարձաւ մարտահրաւէր, մարտահրաւէրներ։ Ազգի բո–վանդակ ներոյժը համադրելու, կազմակերպելու, յարատեւ բանեցնելով՝ զարգացնելու կարիքը կայ, այդ յաղթանակը շարունակ վերարժեւորելու եւ նորոգելու համար։

Այս ճամբուն վրայ, հիմնական պիտի մնայ ազգը համախմբող՝ միաւորող գաղափարական խարիսիւր, այլ խօսքով՝ ազգի առաքելութիւնը խորհիւր եւ նորոգելը։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ՅՈՒՍԱԲԵՐ»Ի

Garo Paylan, Ebru Günay address Argentine parliament

ARGENTINA—Garo Paylan and Ebru Günay of the Peoples’ Democratic Party (HDP) of Turkey delivered strong statements during a conference at the National Congress of Argentina on August 14.

“The same genocide against the Armenians 105 years ago could be repeated today against the Kurds,” stated Garo Paylan. “I am very grateful for Argentina’s recognition of the Armenian Genocide. Many countries recognized it, but did this stop our pain? We will achieve justice when the Turkish Parliament recognizes the Armenian Genocide,” added the Paylan. “Only a truly democratic Turkey will recognize the genocide against the Armenian people.”

Ebru Günay said that the HDP party has gender parity and that those accused of gender violence or those who exercise polygamy are not allowed to participate in it. “We are fighting for women in a region where patriarchy is very strong,” noted Günay. “It is very difficult to fight for the rights of different peoples in an almost fascist environment.”

Garo Paylan and Ebru Günay are participating in a tour in South America that includes Uruguay, Argentina, Chile and Brazil. They met with Uruguayan Vice President Lucia Topolansky and former President Jose “Pepe” Mujica between August 13 and 14.

(Prensa Armenia)

270-meter skyscraper planned

YEREVAN— A 270-meter skyscraper resembling a forget-me-not will be built in the city of Yerevan, Armenia.

The project by Laura Investment will see the construction of a multi-functional 71-storey building surrounded by a 200 ha apricot orchard, as well as playgrounds and a recreational area, revealed Meri Mkrtchyan, the director of the Armenian company.

The complex was designed by Bainona Engineering Consultancy, an Abu Dhabi-based

company, and the two firms insist that the building will comply with all seismic safety norms, A1Plus reports.

“The Forget-me-not complex will create 2500 jobs, and 1300 people are expected to work on construction,” Mkrtchyan said Monday, August 19.

While Mkrtchyan failed to divulge the name of the Armenian architect, she did reveal that two more years will be required to complete the design and five years to build the complex.

(PanArmenian)

Moscow ‘concerned’ with Yerevan, Baku war of words

MOSCOW—Saying that Moscow is concerned with what is being termed as accusations being hurled by Yerevan and Baku, Russian Foreign Ministry spokesperson Maria Zakharova said on August 9 that the rhetoric does not contribute to the development of favourable conditions for the Nagorno-Karabagh conflict resolution negotiations.

“This kind of rhetoric does not help to the development of favourable conditions for the negotiations process, and accordingly, to the interests of finding a compromise options for the resolution of the [Karabagh] conflict,” Zakharova said at a briefing.

“We, as one of the co-chairs

of the OSCE Minsk Group, take into consideration Moscow’s close relations with Baku and Yerevan, remain inclined to provide support with the purpose of a comprehensive advancement of the peace process,” she added.

Zakharova added that Russia’s position on deciding the final status of Nagorno Karabagh and resolving the conflict through negotiations remains unchanged.

“Russia proceeds from the point that the final status of Nagorno Karabagh must be decided through negotiations between Azerbaijan and Armenia. You know our stance. It hasn’t changed,” she said.

Armenia, Russia jointly send humanitarian aid to Syria

YEREVAN—Armenia and Russia have jointly sent another batch of humanitarian assistance to Syria through the Russian-Armenian Humanitarian Response Centre, the Ministry of Emergency Situations said in a news release.

“The humanitarian aid is envisioned for the Syrian population who was affected as a consequence of the military conflict,” the news release said. Minister of Emergency

Situations of Armenia Felix Tsolakyan personally reviewed the cargo before dispatching it.

The aid contains 52.5 metric tons of canned meat, 35 metric tons of canned fish, 40 tons of sugar, as well as dry rations weighing around 14,5 tons.

The Armenian-Russian team will deliver the cargo to representatives of the Syrian Red Crescent, which will distribute it further.

Armenia reaches ‘important’ defence agreements with Moscow

YEREVAN—Defence Ministers Sergey Shoygu of Russia and Davit Tonoyan of Armenia agreed on fresh arms deals at their latest talks held in Moscow, the Armenian Defence Ministry indicated on August 18.

The ministry spokesman, Artsrun Hovannisyan, said they discussed, among other things, Russian-Armenian “military-technical cooperation,” an official euphemism for arms production and supplies.

“Davit Tonoyan and Sergey Shoygu reached a number of important agreements on the implementation of bilateral military-political, military and military-technical programs,” Hovannisyan wrote on his Facebook page. He did not give any details of those understandings.

Hovannisyan said the two ministers also agreed on the importance of continuing joint actions by their armed forces and “reinforcing the combat readiness” of Russian troops stationed in Armenia.

A statement by the Russian Defence Ministry likewise said “joint projects of military and military-technical cooperation” were on the agenda of Saturday’s talks but did not elaborate. It quoted as Shoygu noting “the strategic level of relations” between the Russian and Armenian militaries.

(RFE/RL)

Soldier who abandoned post was ‘lost,’ says Tonoyan

YEREVAN—Circumstances surrounding how Artsakh soldier Arayik Ghazaryan, who abandoned his post and wound up on Azerbaijani territory, are being investigated, with the International Committee of the Red Cross actively involved in the process. Armenia’s Defence Minister Davit Tonoyan told reporters that he believed that Ghazaryan, who has been detained by Azerbaijani officials, had gotten “lost.”

Both Tonoyan and the Artsakh Defence Ministry dismissed Azerbaijani media and official reports, which alleged that Ghazaryan deserted his post to flee “inhumane treatment” by fellow officers and superiors calling it disinformation disseminated by the “Azerbaijani propaganda machine.”

Tonoyan urged the Azerbaijani military to put an end to the disinformation campaign.

At around noon on August

12, Ghazaryan abandoned his position in the military post in Varanda (formerly Fizouli) and was confirmed to have crossed the line of contact into Azerbaijan, according an official confirmation from Baku.

“The Azerbaijani propaganda machine is distributing on social media platforms photos of Private Arayik Ghazaryan, conscripted serviceman who appeared on the Azerbaijani side on August 12 in circumstances yet to be determined. It is mentioned that the serviceman has left his service location due to non-statutory relations, and the minor scratches and scars on Private Ghazaryan’s body are falsely presented to be evidence of violence against him,” said the Artsakh Defence Ministry in a statement the next day.

Azerbaijan, through its propaganda machine, is notorious for distorting the truth at-

tributing its own atrocities to the other side. The Artsakh Defence Ministry added that the false claims by official Baku are aimed at solely to undermine and tarnish the image of the Armenian soldier.

The ICRC announced that its representatives are engaged in confidential dialogue with representatives of the respective authorities regarding Ghazaryan.

“Within the framework of its mandate the International Committee of the Red Cross makes visits to observe the conditions of incarcerated persons, as well as to assist in establishing communication with the family,” the ICRC Yerevan office said in a statement.

Armenia’s Human Rights Defender (Ombudsman) Arman Tatoyan said that he spoke to the ICRC Armenia Director Claire Meytraud about guaranteeing the Ghazaryan’s rights.

Despite protests, Pashinyan green lights Amulsar

YEREVAN—Despite days of growing protests against a mining project in Amulsar, Prime Minister Nikol Pashinyan on August 19 said that his government will allow the Lydian International to move forward with mining gold, claiming that the mining operation will raise Armenia’s environmental standards to “unprecedented levels.”

